

ինծի: Հիմա սա տողերը թափած պահուս ու թուղթին այս ողբերգութեան մեծ բաժինը կու տամ մենէ վեր ուժերու, որոնք մեր պատանութիւնը րրին այսպէս արտամահար, խաբանահար, մա՛նաւանդ անծրագիր: Մինչդեռ մեր երիտասարդ սերունդը թուրքիոյ մէջ կ'իյնար սուրի տակ, ազատուողները ճիրաններուն մէջն էին աղջամուղջին: Սահմանէն անդին ուրիշ սերունդ մը, որ արիւն չէր տեսած, կու գար ինծի ահաւոր փորձառութեան մը ծարաւով...

Զգեի՛ց առաջ Մաթիկին ճեմարանական աշխարհը-ամէնէն քնքուշը սա տղուն աշխարհներէն -պարտաւոր եմ քիչիկ մը բան ալ գետեղել հոս իր մտքին տարողութենէն, զոր անկեղծ համեստութեամբ մը ներկայացուց իբրեւ միջին նմոյշ մը իր սերունդէն, գործնական ու բարենորոգչական, մա՛նաւանդ գիտութեամբ զօրացման ազդակներու սպասարկու խորունկ ախորժանքներով: Խոշոր շնորհ մը կը թուէին այդ յատկութիւնները անոր մտքին, երբ բաղդատուէին մեր բոպիկութեան, չորութեան, կծծիկութեան: Անկեղծօրէն ես մեղադրեցի դպրեւանքը, որ ո՛չ միայն ինծի ոչինչ էր տուած, այլեւ թողած էր «լինելիք» ապրանք մը փախչի իրենց մատներէն: Յետոյ, Մաթիկին միտքը կը շահէր նորէն այդ բաղդատութեան մէջ, համեմատուելով ճղճիմ մարմինին, որ այնքան մը տարր էր ճարած, որքան անհրաժեշտ էր կրելու համար այդ անհամեմատ, հսկայ գանկը միայն, ուր այնքան ծանրութիւնները աշխարհներուն ու տարրերուն պատասպարւած կը հանգչէին: Շատ յստակ է սա զգայնութիւնը, զոր կարգ մը մարմիններ կ'արթնցնեն իրենց չըսուած, գուշակելի ախորժակներէն: Մաթիկ Մելիքխանեանց կը սպասարկէր իր գլուխին միայն: Իր մասին ուրիշ պաշտօններ մտածելն իսկ տարօրինակ կու գար: Դէմքին մանրութիւնը ուղղակի կը ջախջախուէր թիզ մը ճակատէն, լայն ու փառաւոր, գլխուն կէսը դէպի վեր ու ետ՝ գրաւող: Ինչո՞ւ թափած էին մագերը, հարցուցինք իրեն: -Կարիք չունէի անոնց, - պատասխանեց վսեմ պարզութեամբ, - խոմ, մագը մտածում չի: